РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ОБЛАСТЬ АРАГАЦОТН
ОБЩИНА ШАМИРАМ

ARAGATSOTN REGION
SHAMIRAM
MUNICHIPALITY

Հ Հ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Моб. / 093/434358 /
mrazbroyan@mail.ru

N 09 ,,16,, 03 ,, 2012թ.

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ս. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Կից ուղարկվում է Շամիրամ համայնքի 16.03.2012թվականի ն-02 արտահերթ նիստի արձանագրության որոշումը առ դիր 7 թերթից և Ուսու բեկ Թեմուրյանցի կենսագրությունը առ դիր 4 թերթից:

ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Հ. ԲՐՈՅԱՆ

«16» 03 12
Մուտք. 7/1162-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔ

15 մարտի 2012թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 5 անդամներ:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էր համայնքի վեց բնակիչներ՝ Զադա Ուսուբյանը, Ալի Ուսուբյանը, Միշա Օզմանյանը, Քյարամ Շարոյանը, Խոդեդան Մամոյանը, Թեմուր Մամոյանը և համայնքի հիմնական դպրոցի տնօրինությունը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար Մրազ Բրոյանը.
Նիստը արձանագրում էր քարտուղար Յուղաբեր Աբգարյանը.

Լսեցին

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
15 ՄԱՐՏԻ ԹԻՎ - 02 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

/Զեկ. ՅՈՒՂԱԲԵՐ ԱԲԳԱՐՅԱՆ/

1. Համայնքի գործող անվանումը փոխարինելու և նոր անվանմամբ վերանվանվելու մասին.
2. Համայքնի «Ուսուբ բեկի» անվան հիմնական դպրոցում ինտերնետային կապի ստեղծմանը օժանդակելու մասին.
3. Համայնքի հիմնական դպրոցում ֆրանսերեն լեզվի դասավանդումը անգլերեն լեզվով փոխարինելու մասին.

Դեմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0
Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 1/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՆՎԱՄԲ
ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄՐԱԶ ԲՐՈՅԱՆ, ԶԱԴԱ ՈՒՍՈՒԲՅԱՆ/

Հարգելի ավագանի, հարգելի հրավիրվածներ.
1918-20թթ. Ուսուբ Բեկը եղել է Հայաստանի խորհրդարանի անդամ: Ծավալել է ազգաշահ, պետականամետ գործունեություն, իբրև պատգամավոր, կողմ քվեարկել բոլոր հայանպաստ որոշումներին: Զբաղվելով օրենսդրական գործունեությամբ, Ուսուբ Բեկը միաժամանակ

ծառայության մեջ էր Հայկական նորաստեղծ բանակում. եղել է պորուչիկ, գումարտակի հրամանատար: Նրա մասին գրել են քաղաքական գործիչ Արտաշես Աբեղյանը, Ավետիս Ահարոնյանը և ուրիշներ: Հայ արվեստին, մասնավորապես հնագիտությանը նույնպես ծառայությունն է մատուցում Ուսուբ Բեկը, 1912 թ. Սուրմալուում հյուրընկալելով Պետերբուրգի Ռուսական թանգարանի կողմից գործուղված հայ խոշոր պատմաբան, հնագետ և հայագետ Աշխարհիբեկ Լոռիս-Քալանթարին: Վերջինիս վկայություններն իր կատարած աշխատանքի, Ուսուբ բեկի օժանդակության մասին պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում:

Հայ - եզդիական բարեկամության խորհրդանիշը դարձած, Հայաստանի անկախությանը իր կյանքը նվիրաբերած Ուսուբ բեկ Թեմուրյանցի հիշատակի առհավատչյան կարող է լինել հայրենի գյուղը նրա անունով կոչելը:

Շամիրամը ցանկալի է վերանվանվել Ուսուբ բեկ, որը բոլոր համագյուղացիների, 1919թ. Ուսուբ բեկի առաջնորդությամբ Սուրմալուից գաղթած և Հայաստանի տարբեր բնակավայրերում հաստատված բոլոր եզդիների ցանկությունն է:

Համայնքի անվան փոխելուն էր վերաբերվում նաև հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Զադա Ուսուբյանի ելույթը: Նա հիմնականում նշեց, որ յուրաքանչյուր ազգ ունի իրեն հատուկ մշակույթը, լեզուն գիրն ու գրականությունը, բարքերը ինչպես նաև պատմական տվյալները ու գոյատևման տեղանունները, հայտնի քաղաքական և հասարակական գործիչները: «Շամիրամ» անունը ունի ասորական ծագում և վերաբերվում է ասորեստանի Շամիրամ թագուհուն: Որպեսզի միջազգային հանրությունը և մեր հետագա սերունդները վստահ լինեն, որ այս գյուղում ապրել է եզդի ազգը, ուրեմն համայնքը պետք է կրի եզդի ազգի որևէ պատմական տեղանունը, կամ հայտնի քաղաքական գործիչի անունը: Առաջարկում եմ համայնքի Շամիրամ անվանումը փոխարինել Ուսոբ բեկի վերանվանք:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21, և 32 –րդ հոդվածի 15 –րդ կետով: Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և բնակչության մեծամասնության առաջարկությունները համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է՝

Համայնքի «Շամիրամ» անվանումը վերանվանել «Ուսուբ բեկ» անվամբ և հանձնարարել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին ձևակերպել համապատասխան փաստաթղթեր կառավարությանը ներկայացնելու համար:

Կողմ – 5 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 2/

Լսեցին

ՀԱՄԱՅՆՔԻ «ՈՒՍՈՒԲ ԲԵԿԻ» ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ /

Շամիրամ «Ուսուբ բեկ»-ի անվան հիմնական դպրոցում ստեղծվել է համակարգչային դասարան: Դասարանում անցկացվում են ինֆորմատիկայի դասերը և համակարգչային խմբակի պարապմունքները: Դասավանդման պրոցեսը թերի է կազմակերպվում ինտերնետ կապի բացակայության պատճառով: Ուստի խնդրում ենք Ձեր աջակցությունը այդ կապի ստեղծման հարցում:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխան համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է՝

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին աջակցելու համայնքի հիմնական դպրոցի տնօրինությանը, դպրոցում ինտերնետային կապի ստեղծման հարցում:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 3-/

Լսելին

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՁԱԴԱ ՈՒՍՈՒԲՅԱՆ/

Հարգելի ունկնդիրներ .

Ձեզ հայտնի է, որ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության այսօրվա գոյություն ունեցող օրենքներով, թույլատրելի է հանրակրթական դպրոցներում սեփական մայրենի լեզվի դասավանդումը, սակայն ինչ-ինչ պատճառներով կասեցվել է եզդերեն լեզվի դասավանդումը, իսկ դրա փոխարեն դասավանդվում են այն օտար լեզուներ՝ ֆրանսերեն, ռուսերեն: Մեր ազգի լեզվաբանական ոճում, բառերի արտահատչական ձևը շատ է նմանվում անգլերեն լեզվի առոգանությանը: Ուղղակի կխնդրեինք Ձեր աջակցությունը դպրոցում ֆրանսերեն լեզվի փոխարեն դասավանդվի անգլերեն լեզուն:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխան առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին, աջակցելու դպրոցի տնօրինությանը՝ դպրոցում ֆրանսերեն լեզվի փոխարեն անգլերեն լեզվով դասավանդելու համար:

Կից ուղարկվում է Ուսուբ բեկ Թեմուրյանցի կենսագրությունը առ դիր 4 թերթից:

Համայնքի ավագանիներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

Նիստը արձանագրեց Յուղաբեր Աբգարյանը .....

2012թ. մարտի 15
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2012թ. N 1

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ օրենքի 12-րդ հոդվածի համաձայն համայնքի ավագանին **ո ր ո շ ո ւ մ է՝**:

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՇԱՄԻՐԱՄ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ 15 ՄԱՐՏԻ ԹԻՎ - 02 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1. Համայնքի գործող անվանումը փոխարինելու և նոր անվանմամբ վերանվանվելու մասին.
2. Համայքնի «Ուսուբ բեկի» անվան հիմնական դպրոցում ինտերնետային կապի ստեղծմանը օժանդակելու մասին.
3. Համայնքի հիմնական դպրոցում ֆրանսերեն լեզվի դասավանդումը անգլերեն լեզվով փոխարինելու մասին.

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հանանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2012թ. Հունվար 27
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2012թ. N 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾՈՂ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՆՎԱՄԲ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 21, և 32 –րդ հոդվածի 15 –րդ կետով: Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի և բնակչության մեծամասնության առաջարկությունները համայնքի ավագանին **ո ր ո շ ո ւ մ է՝**

Համայնքի «Շամիրամ» անվանումը վերանվանել «Ուսուբ բեկ» անվամբ և հանձնարարել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին ձեռակերպել համապատասխան փաստաթղթեր կառավարությանը ներկայացնելու համար:

Կողմ-5 Դեմ-0 Չեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյարաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հարանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2012թ. Հունվար 27
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2012թ. N 3

ՀԱՄԱՅՆՔԻ «ՈՒՍՈՒԲ ԲԵԿԻ» ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՍՏԵՂԾՄԱՆԸ ՕԺԱՆԴԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխան համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին աջակցելու համայքնի հիմնական դպրոցի տնօրինությանը, դպրոցում ինտերնետային կապի ստեղծման հարցում:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շարոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2012թ. մարտի 15
գ. Շամիրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՇԱՄԻՐԱՄԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 մարտի 2012թ. N4

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՖՐԱՆՍԵՐԵՆ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ կետի համապատասխան համայնքի ավագանին ո ր ո շ ո ւ մ է՝

Առաջարկել համայնքի ղեկավար Մրազ Բրոյանին, աջակցելու դպրոցի տնօրինությանը՝ դպրոցում ֆրանսերեն լեզվի փոխարեն անգլերեն լեզվով դասավանդելու համար:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամներ

Թեմուրով Ահմադ

Քյալաշյան Տոսուն

Աղեյան Ռուստամ

Շալոյան Ռուստամ

Հասանյան Պրիսկ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ԲՐՈՅԱՆ

2012թ. մարտի 15
գ. Շամիրամ

Ուսուբ բեկ Թեմուրյանց

1918թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերի մասնակից, Հայաստանի 1-ին Հանրապետության պառլամենտի անդամ, ռազմական, քաղաքական և ազգային խոշոր գործիչՈւսուբ բեկ Թեմուրյանցը 1896 թվականից եղել է Անդրկովկասի եզդիների առաջնորդը, գործունեության ամբողջ ընթացքում ամրապնդել հայ և եզդի ժողովուրդների բարեկամական կապերը, ծառայել Հայոց պետականության վերականգնման և կայացման մեծ նպատակին՝ դրա մեջտեսնելով նաև իր ազգակիցների ապահով կյանքն ու ապագան:

Պատանեկան տարիներից մտերիմլինելով հայ մեծանուն երգահան Կոմիտասի հետ՝ Ուսուբ բեկը նրան ամեն կերպ օժանդակել է գրի առնելու հայ և եզդիական երգարվեստի բազմաթիվ նմուշներ, որոնք Կոմիտասի շնորհիվ դարձել են հայ և եզդի ժողովուրդների երաժշտական արվեստի իսկական գլուխգործոցներ: Այս փաստն իրենցհուշերում վկայել են ժամանակակիցները՝ անվանի մտավորականներ Փանոս Թերլեմեզյանը և Խաչատուր Կանայանը:

Հայ արվեստին, մասնավորապես հնագիտությանը նույնպեսիր ծառայությունն է մատուցել Ուսուբ բեկը, 1912թ. Սուրմալուում հյուրընկալելով Պետերբուրգի Ռուսական թանգարանի կողմից գործուղված հայ խոշոր պատմաբան, հնագետ և հայագետ Աշխարհբեկ Լոռիս-Քալանթարին: Վերջինիս վկայություններն իր կատարած աշխատանքի, Ուսուբ բեկի օժանդակության մասին պահպանվում են Հայաստանի ազգային արխիվում:

Արգասավոր և հետաքրքրական է Ուսուբ բեկի գործունեությունը 1917-1921թթ.: 1917թ. գարնան, ամռան ամիսներին իր հեծյալ զորաջոկատով Ուսուբ բեկը մասնակցում է Արևմտյան Հայաստանում թուրքերի դեմ մղված կռիվներին, Գարեգին Նժդեհի հետ համատեղ Կողբում և Ալաջայում մարտնչում թշնամական հրոսակախմբերի դեմ: Նույն տարվա աշնանը Գ. Նժդեհի հետմեկնում է Թիֆլիս և նրա միջոցով ծանոթանում, կապեր հաստատում Հայոց Ազգային Խորհրդի անդամների՝ Ավետիս Ահարոնյանի, Արամ Մանուկյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Սիմոն Վրացյանի և այլոց հետ:

1918թ. մայիսին Ուսուբ բեկն իր գլխավորած եզդիական ջոկատով մտնում է Մովսես Սիլիկյանի հրամանատարությամբ գործող Երևանյան զորաջոկատի կազմ և մասնակցում Սարդարապատի, ապա Ապարանի ճակատամարտերին, դրսևորած խիզախության և քաջության համար դիվիզիայի հրանատարի 1918թ. նոյեմբերի 7-ի

թիվ 34 հրամանով պարգևատրվում մարտական բարձր շքանշանով՝ Գերոգիևյան խաչի 4-րդ աստիճանով:

«Եզդի ժողովուրդը հայության հետ միասին կիսելով օսմանյան կառավարության ազգային քաղաքականության զրկանքները, Առաջին աշխարհամարտի դաժանությունները և թուրքական պետության ցեղասպան քաղաքականության ողբերգական հետևանքները, նրա հետ միասին ճաշակեց նաև Մայիսյան հերոսամարտերի հաղթական բերկրանքն ու Հայոց անկախ պետականության ծնունդը», գրել է ԳԱԱ Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմագիտության թեկնածու Կ. Խաչատրյանը՝ բարձր գնահատելով Ուսուբ բեկ Թեմուրյանի գործունեությունը:

Հայաստանի 1-ին Հանրապետության վերջին վարչապետ Սիմոն Վրացյանը իր «Կյանքի ուղիներով» գրքում(Գ հատոր) հուշագրություն է տպագրել Ուսուբ բեկի մասին, նրան համարել իմաստուն և Հայաստանի անկախության գործի նվիրյալ: «Հայերի չափ և, թերևս հայերից էլ ավելի, եզդիները նախանձախնդիր էին Հայաստանի անկախության ուոչինչչէին խնայում նրա պաշտպանության համար», նշել է Ս. Վրացյանը:

1918-20թթ. Ուսուբ բեկը եղել է Հայաստանի խորհրդարանի անդամ, ընդգրկվել Դաշնակցական ֆրակցիայի կազմում, քանի որ այդ կուսակցության անդամ էր: Ծավալել է ազգաշահ, պետականամետ գործունեություն, իբրև պատգամավոր, կողմ քվեարկել բոլոր հայանպաստ որոշումներին: Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Հակոբյանն իր «Հայաստանի խորհրդարանը» մենագրության մեջնշել է, որ եզդի պատգամավորը խորհրդարանական գործունեության ընթացքում միշտ եղել է կառուցողական դիրքերում, գործել ի նպաստ հայկական պետականության, ի նպաստ երկրի բարօրության: «Հաճախ եզդի միակ պատգամավորի (Ուսուբ բեկի) ձայնից էր կախված լինում այս կամ այն հարցի լուծումը, որոշման ընդունումը խորհրդարանում», գրում է Ա. Հակոբյանը:

Զբաղվելով օրենսդրական գործունեությամբ, Ուսուբ բեկը միաժամանակ ծառայության մեջ էր Հայկական նորաստեղծ բանակում. եղել է պորուչիկ, գումարտակի հրամանատար: Պատմագիտության դոկտոր Կլիմենտ Հարությունյանն իր «Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945թթ» գրքումնշում է, որ 1919թ. մարտի 21-ին ՀՀ զինվորական նախարար, գեներալ Հախվերդյանը Նախարարների Խորհրդին գրություն է ուղարկել, ուր մասնավորապես ասվում է.

«...եզդիների գումարտակի հեծյալ հետախուզական մի խումբ գործում է Իգդիրի ջոկատի կազմում: Եզդիական գումարտակի հրամանատարը պորուչիկՈւսուբ բեկ Թեմուրովն է...»: Այդ գումարտակի մասին դեռևս 1924թ. գրել է նաև քաղաքական ակնանավոր գործիչ Արտաշես Աբեղյանը, ընդգծել, որՈւսուբ բեկի առաջնորդությամբ եզդիները «անձնազոհությամբ պաշտպանեցին Հայաստանը ընդդեմ նրա թշնամիների: Նրանք կազմակերպեցին մինչև իսկ հատուկ զորամաս, «եզդիական գումարտակը», որը աչքի ընկնող մասնակցություն ունեցավ քեմալական արշավանքի դեմ մղված ինքնապաշտպանական կռիվներում»:

Ուսուբ բեկը մասնակցություն է ունեցել 1919թ. Երևանում գումարված Արևմտահայերի 2-րդ համագումարին և Հայաստանի գավառապետերի անդրանիկ համաժողովին, ընտրվել Սուրմալուի գավառային խորհրդի անդամ:

Պետական, քաղաքական խոշոր գործիչ Ավետիս Ահարոնյանը բարձր է գնահատել Ուսուբ բեկի ջանքերը հայ-եզդիական բարեկամության, Հայաստանի անկախության նվաճման ու պետականության կայացման գործում: 1920թ. Փարիզում և Լոնդոնում, եվրոպական պետությունների ղեկավարների հետ վարած բանակցությունների ընթացքում, Ա. Ահարոնյանը պատեհ առիթով հիշել է Ուսուբ բեկի անունը՝ նշելով, որ անձամբ ճանաչում է նրան և որՈւսուբ բեկի շնորհիվ միացյալ, անկախ Հայաստանում հայերը և եզդիները միմյանց հետորևէ խնդիր չեն ունենա:

Երբ 1920թ.օգոստոսի 20-ին կնքվեցՍևրի հաշտության պայմանագիրը, ամբողջ հայության հետ բեկը ևս մեծ հրճվանք ապրեց: Օգոստոսի 27-ին նա հեռագիր ուղարկեց Հայաստանի կառավարության նախագահ Հ. Օհանջանյանին, ուր արտահայտելով հայ և եզդի ժողովուրդների բարեկամության կարևորությունը՝ մասնավորապես գրել է. «Եզիդի ժողովուրդը սրտի անհուն ուրախություն զգաց, երբ իմացավ, որյուր ավագ եղբայրների՝ հայերի հայրենիքի Անկախ և Միացյալ լինելը ընդունվել է եվրոպական մեծ պետություններիկողմից»:

Հայոց Եղեռնի և հայերի 1915թ. ցեղասպանության մասին արժեքավոր վկայություն է Միջագետքի Եզդիների հոգևոր առաջնորդ Միր Իսմայիլի նամակ-գրությունը, որը պահպանվում է Երևանի Մատենադարանում: Լինելով հայերի բարեկամը, հայ-եզդիական բարեկամության ջատագով, հպարտանալով Հայաստանի խորհրդարանի անդամ, Սարդարապատի ճակատամարտի հերոսիր ազգակից Ուսուբ բեկով՝ Միր Իսմայիլը մեծ պատվիրակությամբ գալիս է Երևան և

1919թ. իր նամակ-գրությունները հանձնում Ուսուբ բեկին, նրա միջոցով Հայաստանի կառավարությանը:

1920թ. Ուսուբ բեկի նախաձեռնությամբ Ալեքսանդրապոլում (Գյումրի) գումարվել է Հայաստանի եզդիների առաջին համագումարը, որն արժանացել է պետական ուշադրության: Բեկը եղել է համագումարի փոխնախագահը և նպաստել կարևոր որոշումների ընդունմանը ի շահ եզդի ժողովրդի կրթության և հասարակական գործունեության:

Ուսուբ բեկը ականավոր հայ պետական, քաղաքական գործիչներիհետ չհամակերպվեց խորհրդային կարգերի հաստատման փաստին, մասնակցեց Փետրվարյան համաժողովրդական ապստամբությանը այդ իշխանության դեմ, տարագրվեց Պարսկաստան: Սիմոն Վրացյանի խոսքով՝ «իմաստուն Յուսուֆ աղան» կարևորում էր ապավինումը սեփական ուժերին, գնահատում էր ամբողջ ժողովրդի միասնական, հավաքական ուժը, որի դեմ անզոր կարող է լինել թշնամին:

«Դաշնակցականների հետ համագործակցած» Ուսուբ բեկը 1921-ի աշնանը թեև վերադարձավ Հայաստան, հայրենի Շամիրամ գյուղ, թեև նախկինի պես մեծ հեղինակություն էր վայելում իր ազգակիցների շրջանում, սակայն նրա քաղաքական, հասարակական գործունեությանը վերջակետ էր դրված: Բազմաթիվ գործիչներիթվումՈւսուբ բեկը նույնպես ենթարկվեց բռնաճնշումների, աքսորվեց, բանտարկվեց: Նրա մեծ հեղինակությունը պատճառ էր՝ ժամանակավորապես խուսափելու խորհրդային ՊԱԿ-ի հետապնդումներից: Բանտում ձեռք բերած հիվանդությունն էլ վաղաժամ մահվան պատճառ դարձավ: Ուսուբ բեկը վախճանվեց Շամիրամում, 1934թ. հունվարի 12-ին:

«Դաշնակցական անցյալ» ունեցողՈւսուբ բեկի անունը, հասկանալի է, խորհրդային տասնամյակներին գրեթե չհիշել, հանիրավի մոռացության էր մատնվել այդ խոշոր անհատականության գործունեությունը հանուն Հայաստանի անկախության և Հայոց պետականության համար մղված ընդհանուրի ջանքերում:

Հայաստանի անկախության հռչակումից՝ 1991 թվականից հետո միայն հնարավոր դարձավ ճշմարտությունը ի հայտ բերել, ըստ արժանվույն գնահատել եզդի ժողովրդի մեծ զավակի կյանքն ու գործը: 2007թ. Ուսուբ բեկի անունով կոչվեց Շամիրամի դպրոցը, գյուղում նրա ժառանգները մտադիր են հուշասրահ-թանգարան հիմնել, հրատարակության է պատրաստվում ծավալուն հատոր Ուսուբ բեկի և նրա նախնիների մասին: